

Ուր, ասեն, թէ կան բազէներ,  
 Սուր ճանկերով զիս բզկտեն:  
 Ի Սանահին է խանձարուրս,  
 Ապրիմ, մեռնիմ հայրենի տուն,  
 Բաւ է բունիկս իմ սիրական,  
 Թող քեզ մնայ քո վեհարան:  
 Թէ վեհարանդ է շէն, պայծառ,  
 Ընդէր թողուս շրջիս աստանդ.  
 Ասեն անունդ է քո արծիւ,  
 Բայց դու սիրես աւերակներ,  
 Միթէ բու ես աւերակի,  
 Որ չես սիրում շէն—շէն տեղերս:  
 —«Է՛, չգիտես դու իմ վիճակ,  
 Թէ Վարադայ սարի արծիւ,  
 Ո՛հ, ճնճղուկ է դարձեր,  
 Եւ ճնճղուկ միայն ի տանիս.  
 Դորա համար խոնարհեր է,  
 Ճնճղուկիդ հետ խօսում է:  
 Ես սիրում եմ աւերակներ,  
 Դու էլ սիրէ քո շէն բունիկդ.  
 Մի հեռանար Սանահինէն,  
 Թէ ապրիս և թէ մեռնիս,  
 Միշտ երջանիկ ես դու, գիտես.  
 Դերեզմանդ մօտ է սուրբերուն,  
 Առ հովանեաւ տաճարներուն.  
 Դո յիշատակ ես չեմ մոռնար:  
 Թըլ—թըլ կտցիկդ ինձ խօսակ էր,  
 Ձիս թեւադրեց բան ստեղծել,  
 Ձոր նուիրեմ բոլոր զարմիդ,  
 Որ ճնճղուկ անուն կոչինս:  
 Է՛, դուք, մարդիկ հայրենափոխ,  
 Ճնճղուկէն առէք յորդոր,  
 Ուր ծներ էք, անդ մեռէք դուք,  
 Ձեր գերեզման հայրենի հող:

### ՅԱՆԵԼՈՒԱԾ

Մինչ րացաւ բան ճնճղկին,  
 Երկնուց ամպեր որոտացին.  
 Կուժ—կուժ թափէր առատ անձրև.  
 Խցիս տանիքն էր ծակ ու ծակ,  
 Ձուար անձրև վերէն ի վայր.  
 Ասեն, Հայրիկ, քո տեղ փոխե՛ր,  
 Ասի, կայ տեղ, որ չի կաթեր.  
 Թողէք, լաւ է, մնամ խցիկս:  
 Ջրհեղեղի անձրև չէ այս.  
 Ինչ որ երկնուց թափի գետին,

Շնորհ և պարգև է երկնային:  
 Անձրև, կարկուտ շատ եմ տեսել.  
 Ձարքաշ լինել սովոր եմ ես:  
 Ժողովրդին ձայն աղաղակ  
 Լսեց երկինք, անձրև տուաւ.  
 Օրհնեալ Աստուած, որ տայ անձրև  
 Մերթ ի կանուխ, մերթ անաղան.  
 Նա գիտէ, երբ է պիտոյ.  
 Ձի մոռնար հաց հանապաղորդ,  
 Թէ աղօթեմք մեք հաւատով:

1901 Ապրիլ 6 Սանահին:



### ՍԿՋՐՈՒՄՔՆԵՐ Ե ԽՈՐՀՐԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Է Օ Թ Է Ի Յ.

Ձկայ խելօք բան, որ արդէն մտածուած  
 չլինի, պէտք է փորձել միայն մի անգամ ևս  
 մտածելու:

Մեջպէս է սովորում մարդ ծանաչել ինքն  
 իրեն:—Դիտելով՝ երբէք, այլ միայն զօրձելով:  
 Փորձիր պարտքդ կատարել, և կ'ոնանաս ինչ  
 կայ մէջդ:

Իսկ ի՞նչ է պարտքդ:—Սրուայ պահանջը:

Փշելը նուազել չէ, պէտք է մատներդ  
 շարժել խմանաս:

Միայն խոհեմ մարդիկ, որ իրենց ուժերը  
 ծանաչում են և չափով ու ճարտարութեամբ  
 դորձ գնում, հեռու կրթման տշխարհի մէջ:

Մի մեծ պահապանութիւն այն է, որ մար-  
 դիկ իրենց աւելի մեծ բան են երեւակայում,  
 քան են, և աւելի քիչ են գնահատում՝ քան  
 արժանի են:

Երիտասարդը ի՞նչ ծանապարհով այն  
 խելքին հասնէ, որ պախարակելի և փառա-  
 կար համարէ, ինչ որ բոլորն են անում, հա-

ւանում ու քաջալերում ինչո՞ւ պէտք է նա  
ևս չյարմարուի և չյարմարեցնէ իւր բնու-  
թիւնը տեսածին:

Ճշմարտութիւնն այնտեղ կերևայ, երբ  
կիմանաս ամէն տեղ լաւը գտնել և գնահատել:

Խոր և լուրջ մտածող մարդիկ գծուար  
կայութիւն ունին ամբոխի մէջ:

Խոշորացոյցներն ու հեռավորակները  
շփոթում են իսկապէս մարդու առողջ դա-  
տողութիւնը:

Այն ամէնը որ մեր մտքին տալիս է ա-  
զատութիւն, առանց մեզ վերայ իշխելու կա-  
րողութեան՝ կորստաբեր է:

Զսիրողի աչքն է միայն պակասութիւն-  
ներ տեսնում. ուստի պէտք է կտրել սէրը,  
որպէս զի տեսնենք, թայց ոչ աւելի քան զո-  
րա համար պէտք է:

Ամենամեծ բազդն այն է, որ մեր պա-  
կասութիւններն ուղղում և մեր սխալները  
մաքրում է:

Ամենափոքր մաղն անգամ իւր ստուերն  
ունի:

Փոթորկից առաջ առանձին սաստկու-  
թեամբ բարձրանում է այն փոշին, որ ապա  
երկար ժամանակով գետնին պէտք է կաշի:

Միմեանց աւելի լաւ կձանաչէինք, եթէ  
չնշտէինք միշտ ուրիշներին հաւատար երեւի:

Այդ իսկ պատճառով աչքի ընկնող մար-  
դոց բանը վատ է. Չհամեմատելով նոցա  
հետ, նոցա վերայ աւելի սուր աչք են ու-  
նենում:

Ամէն ջուր եղած տեղում գորտ չի լինի.  
Թայց ուր գորտ կայ, կայ և ջուր:

Ով օտար լեզուներ չգիտէ, իր լեզուից  
ևս բան չէ հասկանում:

Գործունեայ մարդու համար կական  
այն է, որ ինքը ճշմարիտը գործէ. թէ ա-  
րդեօք աշխարհում ճշմարիտը կատարուում է,  
թող չհոգայ այդ մասին:

Շատերը կան, որ մութնով պատր ծե-  
ծում են և կարծում են, թէ ամէն անգամ  
բեռնի զլիւն են խփում:

Ինչ որ չես հասկանում, տէրը չես:

Այնքան կարողութիւն ամէն մէկը կու-  
նենայ, որ իւր համոզմունքն իրագործէ:

Արեւի առաջ ցիւնն էլ փայլուն է դա-  
նում:

Զրազացականը կարծում է, թէ ցորենը  
միայն նորա համար է բուսնում, որ իւր  
ջրազացը բանէ:

Ամենաբազումը մարդը նա է, ով իւր  
կեանքի վերջը սկզբի հետ կապել կարող է:

Մարդս այնքան քմահաճ է և հակասու-  
թիւններով լի, որ իւր օգտի համար ոչ մի  
ստիպում կամովին յանձն չի առնի թայց ի  
վնաս իւր՝ ամէն բռնութեան կենթարկուի:

Անագատում ապրող հնդիկները երդու-  
ում են ձուկ ամենեւին չուել:

Կարծիքներ յայտնելու համարձակութիւ-  
նը նոյն է թէ խաղի քարերը յառաջ տանել  
կարելի է քարերը կառնեն, թայց զորանով  
ընթացք է տրուում խաղին, որ տանել ևս  
կամենում:

Նոյնչափ ստոյգ որչափ և զարմանալի է  
այն, որ ճշմարտութիւն և մոլորութիւն մի  
աղբիւրից են բղխում. ուստի շատ անգամ  
մոլորութեան առաջը արգելք չպէտք է դնել,  
որպէս զի ճշմարտութիւնը չվնասուի:

Համարում թիւեր մի ջահ է, բայց ահա-  
գին ջահ. ուստի բոլորս աշխատում ենք այն-  
պէս միայն աշխարհը հուսա տուած մօտից անց-  
նել վախենալով մի՛ գուցէ այրուենք նորա  
բոցից:



## Հ. ԳԱՐԵԳԻՆ ԶԱՐԲԱՆԱԼԱՆ

1827—1901

Քիչ է Հայոց զրականութեամբ զրա-  
զուողներին թիւը. աւելի սակաւաւոր՝ մեր հին  
մատենագրութեամբ պարապողները. ուստի  
ամէն մի կորուստ այս կողմից զգալի է մեզ  
համար և չի կարելի անյիշատակ թողնել այն  
մարդու մահը, որ մօտ քսոստուն տարի աշ-  
խատեց «Հին դպրութեան» պատմութեան վե-  
րայ: Ներկայ տարուայ մարտ ամսին մեռաւ Հ.  
Գարեգին Զարրհանալեան: Մի ինքնաբերական ու խ-  
փ վստակաւոր անդամներից մինը, և այսօր  
զրադուած են մարդիկ կազմել այն անձի կեն-  
սագրութիւնն և զրական արժէքն ու չափը,  
որ իւր կեանքի վերջին կէտը նուիրել էր մեր  
հին մատենագիրների կեանքի ու հեղինակու-  
թիւնների ուսումնասիրութեան:

Մի ինքնաբերական բերան «Բաղմավէպ»-ը  
բառ չի գտնում զովելու իւր հանգուցեալ  
անդամին. «սուրբ հաղարեան ձգնաւորի» հո-  
գու տէր, «հսկայ զրական գրիչ», բեղմնաւոր  
գրիչ հազուադիւս յիշատակարան \* և այլն,  
և այլն: Դժբաղդարար «Գեղունի» զովասան-  
քից այն կողմ չի անցնում և շատ քիչ դէպ-  
քեր և իրողութիւններ է յիշում, որով կար-  
ելի լինէր չափել հանգուցեալի իսկական ար-  
ժէքն և մեզ համար պարզ լինէին նորա բնա-  
ւորութեան յատուկ գծերը:

Հ. Գ. Զարրհանալեան ծննդեամբ Պոլսեցի  
է: Ոչնչւն լեզուներ նորա ծնողաց, մանկական հա-  
սակի և կրթութեան մասին: Պատանի հասա-  
կում՝ 1837-ին ուղարկուած է Վենետիկ՝ ս.  
Ղազարի վանքը ուսում ստանալու համար:

Անյայտ է մեզ համար նորա տան տա-  
րուայ աշակերտական շրջանը. ինչ էին հան-  
գուցեալի սիրելի պարապմունքն ու խաղերը.  
որքան էր նորա յատաճագիմութիւնը, որն էր  
նորա սիրով ուսանելի աւարկան և ինչ...  
հարցեր, որ ամենին նեղութիւն չի քաշել  
պարգելու մեզ «Գեղունի»: Միայն յիշատակում  
է, որ «Հ. Գարեգինի դաստիարակն էր միա-  
բանութեան և բրեւմն անդամ հանգուցեալ Տ.  
Գարրիէլ Արք եպիսկոպոս Ա. յիւզովսիկ»\*, որով  
և մասամբ բացատրուում է Զարրհանալեանի  
Հայոց հին դպրութեան սէրը: Նա մինչև վեր-  
ջին շունչը այս առարկայով էր զրադուած:

Քահանայական կոչումն ստանալուց յե-  
տոյ մի շարք պաշտօններ է վարել մերթ ս.  
Ղազարի վանքում, մերթ Կ. Պոլիս և մերթ  
Պարիզ: Չնայած «Գեղունու» զովասանքին,  
որով հանգուցեալը հուշակուում է զործնա-  
կան կեանքում տաղանդաւոր գործիչ, սակայն  
մինչև վերջը նա հիւրընկալի, վերակացուի  
անանախ, ուսուցչի և քարտուղարի ու այլ սոյն  
նման պաշտօններից այն կողմ՝ չի անցել, որ  
ցոյց է տալիս թէ այնքան էլ «տիպլումատ» չի  
եղել ինչպէս անուանում է Հ. Ս. Ներեմ:

Թէ ինչ ոգի և ուղղութիւն է ունեցել  
իւր գործունէութեան մէջ, երեւում է այն  
տեղեկութիւնից, որ պատահարար դուրս են  
թուում կենսագրի գրչից. Կ. Պոլսում «Հա-  
սան Բերապար»-ին Բժ լինում էլ լայն» (մենք  
ենք ընդգծում) մի անձի, որ այնքան աղէտ-  
ների դուռ բաց արաւ նոյն իսկ իւր հօտի  
համար և ջանաց ամէն կերպ խեղդել կաթո-  
լիկ հայերի մէջ ազգայնութեան ոգին և գա-  
ղափարը: Նոյն Զարրհանալեանն էր, որ ոչ  
միայն Պարիզում՝ Մուրադեան վարժարանը  
փնտա համարողներին կուսակից, այլ և ինքն  
էր այդ դպրոցը փակողն ու վաճառողը: Այս  
ոգին մեզ աւելի պարզ կլինի եթէ ի նկատի  
առնենք նորա մի այլ յատկութիւնը— ծայրա-  
յեղ պահանջողական իւր բոլոր գործերի մէջ,  
միացած կոյր հնապանդութեան դուսնանքի  
հետ՝ այսպիսի մի կաթոլիկ կրօնաւոր չէր կա-

\* «Տ. արք եպիսկոպոս» քառեր մեր աւելացածն  
է, և լցիտեմ ինչու Հ. Ս. Ներեմ. զանում է աշխարհ-  
գեան արեպս. ին իւր պատմանդ:

\* Տես Բագմ. մարտ ամսի յաւելում «Գեղունի»: